ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 26.01.2026թ. հ. 15-2026 գրության՝ Ա. Տիգրանյան նրբանցքի հ. 4 հասցեի վերաբերյալ բաձրացված խնդրի կապակցությամբ, տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ:

Տեղում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կոյուղատար համակարգը պատկանում է «Մարի Իզմիրլյանի» անվան մանկատանը, ուստի կոյուղատար համակարգի անսարքության կարգավորումը գտնվում է վերջինիս պատասխանատվության ներքո, որի վերաբերյալ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից միջնորդագիր է ուղարկվել վերջինիս՝ խնդիրն ուսումնասիրելու և հնարավորինս արագ կարգավորելու նպատակով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով հարցի կարևորությունը, տեղեկացվում է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից կոյուղատար համակարգի խցանումը վերացվել է և այժմ կոյուղաջրերի արտահոսք չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ